# ՄԵԾԱՎԱՍՏԱԿ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

## ԼՐԱՆՈՒՄ Է ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

Լրանում է հայ լեզվաբանության ականավոր դեմքերից մեկի՝ Էդուարդ Աղայանի ծննդյան 100-ամյակը: Իր բազմամյա բեղմնավոր գիտական գործունեության ընթացքում Էդուարդ Աղայանը մեր լեզվաբանությունը հարստացրեց նորանոր ուսումնասիրություններով և բազմաթիվ մեծարժեք աշխատություններով:

Էդուարդ Բագրատի Աղայանը ծնվել է 1913 թվականի մարտի 16-ին, Մեղրիում: Միջնակարգ կրթությունը ստացել է ծննդավայրում, իսկ 1933 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի լեզվագրական ֆակուլտետը, որն ավարտել է 1938 թվականին: Հաջորդ տարի նրան, երբ դեռ 26 տարեկան էր, վստահվել է դասախոսական ամբիոն: Համալսարանում նա դասավանդել է գրաբար, լատիներեն, պարսկերեն, լեզվաբանության ներածության, հայերենի համեմատական քերականություն, ժամանակակից հայոց լեզու և ընդհանուր լեզվաբանություն:

Էդուարդ Աղայանի գիտական հետապոտության առաջին հիմնահարցը եղել է իր մայրենի Մեղրու բարբառի ուսումնասիրությունը, որը լույս է տեսել 1954 թվականին: Այս աշխատության համար 1941 թվականին Էդուարդ Աղայանին շնորհվել է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: 1946 թվականի մայիսին Աղայանը "Հայ լեզվաբանության պատմություն" թեմայով պաշտպանեց դոկտորական դիսերտացիա: Նրան շնորհվեց նաև պրոֆեսորի կոչում: 1953-ին քառասունամյա գիտնականն ընտրվել է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ: Նույն թվականից մինչև 1956-ը եղել է Երևանի համալսարանի գիտական մասի գծով պրոռեկտոր, ապա ընդհանուր և համեմատական լեզվաբանության ամբիոնի վարիչ, 1962-ից համատեղության կարգով Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ: 1982 թվականին Էդուարդ Աղայանը ընտրվել է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ:

Արգասավոր է լեզվաբան-գիտնականի ստեղծագործական ուղին: Լայն են նրա գիտական հետապոտությունների շրջանակները: Բազմազան են այն բնագավառները, որոնք նա ընդգրկել է իր գիտական գործունեության ընթացքում: Սակայն այս բոլորի մեջ Էդուարդ Աղայանի գիտական հետաքրքրությունների բարձրակետը եղել է ընդհանուր լեզվաբանությունը, որն իր մեջ ընդգրկելով առանձին լեզուների, լեզվական խմբերի ու ընտանիքների հետապոտությունների ընդհանրացումը, նպատակ ունի պարզելու ու գտնելու լեզվական երևույթների միջև եղած կապերը, նրանց փոխադարձ պայմանավորվածությունը և, այսպիսով, ի հայտ բերելու մարդկային լեզվի զարգացման ընդհանուր օրինաչափությունները: Այդ ուղղությամբ նրա կատարած հետապոտությունների արդյունքները ամփոփված են "Լեզվաբանության ներածություն" ծավալուն գրքում, որն ունեցել է մի քանի հրատարակություն, թարգմանվել է ռուսերեն և արժանացել համամիութենական ճանաչման ու դարձել դասագիրք բուհերի համար:

Մեծ են գիտնականի վաստակն ու ներդրումը հայոց լեզվի քերականության ուսումնասիրության բնագավառում: Հայերենի պատմության, պատմահամեմատական քերականության և ստուգաբանության հարցերին նվիրված են Աղայանի մի շարք արժեքավոր աշխատությունները: Էդուարդ Աղայանը իր մեծ վաստակն ունի նաև դպրոցական քերականության նոր դասագրքերի ստեղծման մեջ:

Էդուարդ Աղայանի գիտական բեղմնավոր գործունեության բնագավառներից մեկն էլ հայ լեզվաբանական մտքի ուսումնասիրությունն է, որին նվիրված է նրա "Հայ լեզվաբանության պատմություն" երկհատորանոց աշխատությունը (1958-1962): Նշանակալից են Աղայանի վաստակն ու ներդրումը նաև հայ բառարանագրության մեջ: 1976 թվականին լույս տեսավ նրա երկարամյա աշխատանքների արդյունքը՝ երկհատոր "Արդի հայերենի բացատրական բառարանը":



Էդուարդ Աղայանը մեծ ջանքեր ու եռանդ է գործադրել իր ուսուցչի՝ բազմավաստակ հայագետ Հրաչյա Աճառյանի, մեծաթիվ գիտական աշխատությունների տպագրության պատրաստման ու հրատարակության գործում:

Արգասավոր է եղել նաև Էդուարդ Աղայանի մանկավարժական գործունեությունը: Երկար տարիներ անընդմեջ դասավանդելով Երևանի պետական համալսարանում՝ նա իրեն հատուկ սիրով ու ոգևորությամբ իր անսպառ գիտելիքները է հաղորդել հայ երիտասարդությանը:

Հայրենիքը բարձր է գնահատել Էդուարդ Աղայանի դասախոսական ու բեղմնավոր գիտական գործունեությունը, կազմակերպչական տաղանդն ու երկարամյա անբասիր աշխատանքը: 1970 թվականին նրան շնորհվել է գիտության վաստակավոր գործչի կոչում: Իսկ 1983 թվականին Էդուարդ Աղայանը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:

Մեծավաստակ գիտնականը մահացել է 1991 թվականի դեկտեմբերի 29-ին:

# ՇՈՒՆԸ ՏԵՐՈՋԸ ՉԻ ՄՈՌՆԱ

## (ԵՂԵԼՈՒԹՅՈՒՆ ԹՈՓԹԻԻ ԽՈՍՎԱԾՔՈՎ)

Մեր հայ ժողովուրդը մեկ ասացվածք ունե՝ "Շունը տերոչը չի մոռնա": Ես ալ կասիմ ասպես. "Շունը նայած ինչե՞ս տերոչը, ի՞նչ արածին համար չի մոռնա": Շունը խելքով, միտքով հայվան է: Առչինը մաշդուն սորվեցած հայվաններեն մեկը էղիլ է շունը:

Նա տերոչը իրեն հետ վարքով էղածին չի մոռնա, մեն ալ իրեն չինայող տերոչը չի մոռնա: Հապա տերը կապե, վրանա չընայե և կամ թե ապուլ տուված... Սաղ օրը կառմիտ չանելե, շունն ալ մհալայե մհալա ման գա, ուտելիք փնտռե նը, ադ շունը իհարկե տերոչը ադպես բան արածը չի մոռնա:

Մեկ ժամանակըմ մեքատը պատմից՝ ասպես դեպք.

Դիրացիները կելլին սաղ ընտանիքով, ամիսով, հեռու տեղ յալ անելու կեշթան: Շունին վրայով ալ կըմոռնան, կապած: Կանցնին օրեր, շաբաթներ, շունը քախցած, ծառավ բառկած է: Դիրացիները կըմեխքընա, կըբաշլայե կառմիտ անելու, անկից ալ կառնե իրենց յոռոխ կըտանե, կընայե:

Ամիս անցնելեն էտեվ՝ մեմա կընայիս ալղը մաշդիկը սաղ սեմյայով կուգան: Կընային՝ շունը չիքա: Ասքով անքով, կընային՝ դիրացիններուն դուռը շունը կըմանգա: Կեշթան շունին կըկանչին առնելու, շունը քովերը չիմոտկընա: Շունին հայվանին թաբլիլ ին կապին վրան, գնացիլ ին: Ադպեսով ադ շունը ադ տերոչը արած բանին համար իհարկե չի մոռնա և նոր տեր կունենա:

Ես ալ, երբ որ ադ պատմութինը լսեցի նը, իմիս միտքըս ընկավ մեկ շունի մասին և շինըխ ալ կուզիմ պատմել իմիս պատմութինըս:

Պատմելուս մոտավորապես 1987-ներուն տարիներուն էղված բան է:

Մեկ աշխատանքի օր էր, մեքատ հետերուս բանողներեն, շունին կապեն բռնած բերից և ասաց. "Սա շունըս խաթի ըռինդ շուն է համա, օռղաչի է քըցնե՝ ինձի բալաներուն տեղավոցունելը դիժար կըլա, իրեն ալ վերչացունելու կըմեխկընամ, վերչացունելը մեխք գործել է,-ասաց: - Զանիկըս, թող կենա սա խապյայստվային մեչը, նային ալայով, անունն ալ Ֆաֆիկ է",-ասաց: Իդապես ալ կասեինք շտե անունը: Շունը ինքն ալ անունը խաթի ըռինդ գիտեր:

Կարճ ասած՝ խոսքեն չելլանք, հոժար էղանք, կապեցինք մեկ քանի օրմը: Տերն ալ հետերըս բաշլայեցինք նայելու: Ամեն օր հորսուկու հացի ժամանակ նարայալ մեչե քըհանեյինք շտե: Ադպես խայրով ժամանակ անցնելեն էտեվ կապին վրայեն ալ ապուլ տուվինք:

Անպես ըռիդ սորվեցավ որ իդա շունը մեկի, մանավանդ ինձի խաթի կուզեր: Էղավ ադ շունը իրեն առաչվան տունն ալ մոռցավ, ան տերոչը հետ ալ անքան չէր ըլար, ինչքան որ ինձի հետ կըլար նը: Ես տերը էղածի պես բան էղա:

Շինը հանա ինձի խաթի ուզեցածին պատճառը պիտ պատմիմ.

Էղավ ժամանակ շունը ծանդըռեցավ: Դուսը կույց է, հավաները բաղ: Իդա ցուրտերուն ցննեցավ դուսը մեքադ քոշա տեղ:

Խիստ մեխքընալու բան էր: Մոտկըցա քովը... Բալաներուն խուչախ արած պառկած, դողալեն, խեղե՛ճ էղած իմիս աչքերուս մեչը կընայե: Նայեցա վրան խաթի մեխքըցածես առի մեքադ կառդոնե կառոբկա, մեչը դրի բալաներուն, իրեն ալ կանչեցի էտեվես: Բերի նեսը, կառոպկային մեչն ալ մեքադ փեռադ կուվայկի կար, տակերը փռեցի: Իրեն ալ, բալաներուն ալ մեչը դրի: Հոտ աշտըխ նայողը ես էղա: Անոր համար, որ ադ տեղը ինձիմեն ջոգ նայելու մաշդ չէր մուտներ:

Բալաները նոմայ չէին էրկու հատ բան էին: Իդապես մեծցան, բաշլայեցին մորը հետ ման քալու: Ամառը էլլանք, բուտկա խոշտեցինք: Բալաներուն մեքատին մեծնալներեն էտեվ՝ հետերըս բանող կինմաշդ առավ, մեկալին ալ ադպես մեքատ ուրիշը առավ: "Զմեռվան շունը կուտռուկ կըլա",- ասին՝ ադպես առին:

Ադ բանեն էտեվ ադ շունը անպես կապված էր, որ հետըս կրունկիս էտեվեն կըմանգար: Իրեն բերած տերոչը հետ չէր մանգար միամթե ինձի հետ էր: Կոնտոռ կըմուտնեյի՝ մինչեվ էլլելույիս դուռին տակը պառկած կըլար, ջամփաս կընայեր: Հանա իդա շունին իդաքենվան, չմոռնալու տերը ես էղա շտե:

Իդա շունը սաղ օրը հետըս կըլար դա՝ տունը էշթալու ժամանակըս գիտեր, ինձի կըջամփեր, վերչը կըհեռունար:

Առավտուն նա անպատճառ իմիս դեմըս պիտ էլլեր: Ադպես կապված էր ադ շունը ինձի հետ: Ժամանակ անցավ՝ շունը կենե ծանդըռեցավ:

Մեկ սաբախտան ալ էկա, շունը դեմըս չելլի-չիքա: Դարա-նարա հարցունք-փորցունք կանիմ, գիտցող չիքա: Ծանդռած շունը ադպես կորավ: "Ախպար ադ շունը ինձի մոռնալիք չէր, ինչե՞ս էղավ, որ կորավ",- կասիմ մաշդոցը:

Տարի անցնելեն էտեվ իմացանք, որ շունին վարքիլ ին: Դըհա ժամանակ անցնելեն էտեվ ալ, վարնողն ալ ով էղողը իմացանք: Շատ մեխքըցանք շունին ալայով, բայց ինչ օգուտ՝ արդեն շունը չիքա, կորուստը ետ քալու բան չէր:

Մեքատ ալ բան կուզիմ ասել. "Ադպես ծանդռած հայվանին վարնել սպանելը խիստ մեծ մեխք գործել է, ադիվոր տեղը նա անպատճառ մեկ անբախտութին դուս քուքա",- ասին կինմաշդիքը:

Միգուցե ադ մեխքին համար ադպես բան ալ դուրս էկած է՝ չիտիմ:

Անցիլ է 26 տարի, դըհա կենե ադ շունին մասին միտքես չելլի:

Ս. ԱՏԱՄԱՆՅԱՆ